

# ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ԲԱՑՄԱՆԸ

10.11.2017 11:11



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի խորհրդական Վրեժ Խաչիկյանը Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հրավերով օրերս մասնակցել է Արցախի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի բացման արարողությանը:

Կլինիկան ստեղծվել է իրավաբանական ֆակուլտետի ավարտական կուրսի ուսանողների պրակտիկ գործունեությանը նպաստելու և սոցիալապես անապահով խավին պրո բոնո (անվճար) իրավական օգնություն տրամադրելու նպատակով: Կլինիկայի ուսանողներին ուղղորդելու են Արցախի փաստաբանների պալատի անդամները:

ՀՀ ՓՊ նախագահի խորհրդական Վրեժ Խաչիկյանը ՀՀ փաստաբանների պալատի անունից ողջունել և բարի երթ է մաղթել ուսանողներին՝ նորաստեղծ կլինիկային մասնագիտական գրքեր նվիրելով:

ՀՀ փաստաբանների պալատը մասնագիտական գրականություն է նվիրել նաև Արցախի փաստաբանների պալատին:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```